



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 09/19**

15.04.2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն)՝ քննարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, «Ապրանքային նշանների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

«ՍԱԿԻ ԸՆԴ ՍԱՆՍ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Դիմող), դիմելով ՀՀ Սահմանադրական դատարան, խնդրել է որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, «Ապրանքային նշանների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներում օգտագործվող «հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ» ձևակերպումը չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին առ այն, որ օրենքով սահմանված չեն այն չափանիշները և կառուցակարգերը, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի գնահատել սպառողի մոտ շփոթություն առաջացնելու իրական, այն է՝ օբյեկտիվ չափանիշների կիրառման արդյունքում վեր հանված փաստացի հնարավորությունը:

Իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանելու արդյունքում էլ, ըստ դիմողի, վիճարկվող դրույթները հակասում են նաև ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված ազատ տնտեսական գործունեության և սեփականության սահմանադրական իրավունքներին:

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Գտնում ենք, որ սույն գործով ներկայացված անհատական սահմանադրական դիմումը հիմնավոր չէ, և վիճարկվող դրույթները սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չեն հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի և դրա բովանդակության վերաբերյալ սահմանադրական դրույթների հետ միաժամանակ՝ իրավական համակարգում և իրավակիրառ պրակտիկայում կարևոր նշանակություն

ունի նաև օրենքներում օգտագործվող հասկացությունների և ձևակերպումների ոչ ինքնաբավական սկզբունքը:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2008թ. նոյեմբերի 25-ի իր ՍԴՈ-780 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում:*

Ընդհանրապես իրավաստեղծ գործունեությամբ անհնարին է հասարակական կյանքի բոլոր երևույթներն ու հանգամանքները մանրամասն ենթարկել համապարփակ և ամբողջական իրավական կարգավորման՝ սահմանելով յուրաքանչյուր իրավական ձևակերպման հասկացությունը, դրա ճիշտ ընկալման համար անհրաժեշտ չափանիշները, այդ չափանիշների ըմբռնման կառուցակարգերը և մեկնաբանման առանձնահատուկ ընթացակարգերը: Օրենքների բնորոշ հատկանիշ է դրանց վերացկան բնույթը և հասարակական հարաբերությունների կարգավորումն իրականացնում է անորոշ իրավական հասկացությունների սահմանման միջոցով, որոնք մեկնաբանվում են իրավակիրառ պրակտիկայում:

Բազմաթիվ օրենսդրական հասկացությունների և իրավակարգավորումների ընկալումն օրենսդիրը բնականաբար թողնում է իրավակիրառողի ողջամիտ ընկալմանը՝ հիմք ընդունելով, ի թիվս այլնի, նաև իրավակիրառողների կողմից անկախ և անկողմնակալ լինելու, օբյեկտիվ և ներքին համոզմունքի հիման վրա գործելու սկզբունքը:

Հակառակ պարագայում կատարվի, որ ցանկացած իրավական ձևակերպում կամ հասկացություն կարող է վիճարկվել սահմանադրական դատարանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին չհամապատասխանելու հիմքով այն հիմնավորմամբ, որ օրենսդիրը չի սահմանել այս կամ այն հասկացության կամ ձևակերպման ընկալման չափանիշներն ու կառուցակարգերը, որպիսի մոտեցումը առաջին հերթին կխաթարի իրավական անվտանգությունը:

Կարծում ենք, սույն սահմանադրական վեճի պարագայում նույնպես վիճարկվող ձևակերպման իրավական որոշակիությունը չի կարող սահմանադրական դատարանում քննարկման առարկա դառնալ, քանի որ նախ ենթաօրենսդրական մակարդակով քննարկվող ձևակերպումների բովանդակությունը բացահայտված է, և ի վերջո, այդ ձևակերպումների բովանդակության բացահայտումը իրավակիրառ պրակտիկայի խնդիրն է: Ընդ որում, վիճարկվող դրույթներում ենթադրյալ իրավունքի բացը չի կարող հաղթահարվել սահմանադրական արդարադատության միջոցով, քանի որ այդ բացի հաղթահարումը վերոնշյալ հիմնավորումներով իրավաստեղծ գործունեության տիրույթում է:

Ինչ վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից սույն գործով ոչ միայն օրենքների, այլ նաև իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականությունը ստուգելուն, ապա անհատական սահմանադրական դիմումում Դիմողի կողմից նման պահանջ չներկայացվելուց զատ, չի ներկայացվել նաև իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթների սխալ կիրառման վերաբերյալ որևէ ապացույց:

Եթե նույնիսկ ընդունենք, որ սովորական դատարանների կողմից Դիմողի որևէ իրավունք խախտվել է, և Դիմողը զրկվել է Սահմանադրությամբ երաշխավորված որևէ

իրավունքից, ապա դա չի նշանակում, որ այդ խախտումը վիճարկվող օրենքների՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու հետևանք է:

Վերոնշյալ հիմնավորմամբ, գտնում ենք, որ:

**Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, «Ապրանքային նշանների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չեն:**

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան